Հավելված
Հաստատված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2006 թվականի հունվարի 20-ի
№ 7Ա որոշմամբ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բնական գազի փոխադրման ցանցի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու

Պայմանները

(Լիցենզիա N 0195 , տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թ. հունվարի 20-ի N 7Ա որոշմամբ)

1. Սահմանումներ

Սույն լիցենզիայում օգտագործվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ իմաստները.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Բնական գազի փոխադրման ցանց՝ բնական գազ փոխադրող գազատարի, կայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով բնական գազը հասցվում է (փոխադրվում է) այլ բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձին կամ բնական գազ բաշխողին (գնորդին), կամ սպառողին (բաժանորդին), կամ տարանցվում երրորդ երկիր, և որի կառավարումն ու շահագործումն իրականացնում է փոխադրողը.

Լիցենզավորված անձ՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը սույն լիցենզիայով սահմանված պայմաններով իրականացնելու բնական գազի փոխադրման ցանցի կառուցման գործունեություն.

Ներդրումներ՝ Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ օգտակար և օգտագործվող ակտիվների մեծացմանը կամ փոխարինմանն ուղղված ներդրումներ.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2.1 Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 20-ից:

2.2 Սույն Լիցենզիան գործում է մինչև 2007 թվականի ապրիլի 30-ը:

3.Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

3.1 Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից, 2005 թվականի օգոստոսի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N1340Ն որոշմամբ հաստատված ծրագծի համաձայն (Հավելված N1), Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է կառուցել Իրան-Հայաստան գազամուղի Մեղրի-Քաջարան շուրջ 40 կմ երկարությամբ բնական գազի փոխադրման ցանցը:

3.2 Բնական գազի փոխադրման ցանցի տեխնիկական ցուցանիշներն են

փոխադրման ցանցի երկարությունը՝ շուրջ 40 կմ,

գազատարի արտաքին տրամագիծը՝ 711,2 մմ,

գազատարի պատի հաստությունը՝ 8-11 մմ,

աշխատանքային ճնշումը փոխադրման ցանցում՝ 5,5 ՄՊա:

4. Լիցենզավորված գործունեության պայմանները

4.1 Բնական գազի փոխադրման ցանցի կառուցման սխեման և տեխնիկատնտեսական ցուցանիշները հաստատվում են 2005 թվականի օգոստոսի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N1340Ն որոշմամբ հաստատված ծրագծով, Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված, սահմանված կարգով հաստատված բանվորական նախագծով և սույն Լիցենզիայով:

4.2 Լիցենզավորված գործունեությունը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հանձնաժողովի կողմից սահմանված ու այլ իրավական ակտերին և սույն Լիցենզիայի պայմաններին:

4.3 Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավադրել կամ փոխանցել մեկ այլ անձի:

4.4 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին:

4.5 Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

4.6 Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

4.7 Լիցենզավորված անձն անմիջապես Հանձնաժողով պետք է հայտնի սույն Լիցենզիայի պայմանների խախտումների, ինչպես նաև խախտումների հանգեցնող հանգամանքների մասին:

4.8 Իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումների մասին Լիցենզավորված անձը 10-օրյա ժամկետում տեղեկացնում է Հանձնաժողովին:

4.9 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել լիցենզավորված գործունեությանը վերաբերող՝ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը):

4.10 Հանձնաժողովի պահանջով Լիցենզավորված անձը իրականացնում է լիցենզավորված գործունեության ֆինանսական անկախ աուդիտ և եզրակացությունը ներկայացնում Հանձնաժողով:

4.11 Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է՝ պահպանելով աշխատանքների ժամանակացույցը և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 25-օրյա ժամկետում հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով՝ բնական գազի փոխադրման ցանցի կառուցման աշխատանքների վերաբերյալ:

4.12 Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

4.13 Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան՝ լիցենզավորված գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով:

4.14 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Հանձնաժողովի սահմանած պահանջներին:

4.15 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվություններից:

4.16 Լիցենզավորված անձը բանկային հաշիվներ բացելու կամ փոխելու դեպքում այդ մասին 15-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է Հանձնաժողովին:

4.17 Լիցենզավորված անձը ներկայացնում է լիցենզավորված գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկություն, որը կպահանջի Հանձնաժողովն իր կողմից սահմանված ժամկետներում և ձևերին համապատասխան:

4.18 Լիցենզավորված անձը, մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը, պարտավոր է կատարել բնական գազի փոխադրման ցանցի փորձարկման աշխատանքներ՝ համաձայն նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջների:

4.19 Հանձնաժողովի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգում և ձևերում փոփոխություններ կատարելու դեպքում Հանձնաժողովն այդ մասին ծանուցում է Լիցենզավորված անձին՝ նշված փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.20 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4.21 Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված պայմանագրերը ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում սահմանված կարգով գրանցվելու պահից:

5. Լիցենզավորված գործունեության վերահսկողությունը

5.1 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովն՝ իր կողմից սահմանված կարգով:

5.2 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

5.3 Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

5.4 Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

6. Տույժեր

6.1 «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները խախտելու, Հանձնաժողովի իրավական ակտերը և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ տույժերը.

ա) նախազգուշացում,
բ) Լիցենզիայի կասեցում,
գ) Լիցենզիայից զրկում:

6.2 Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

6.3 Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով:

6.4 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ սույն կարգի 6.1 կետով սահմանված տույժերով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

7. Լիցենզիայի դրույթների և պայմանների փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Լիցենզիայի կորստի դեպքում Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրում

7.1 Կառուցման ընթացքում բնական գազի փոխադրման ցանցի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձն անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ ներկայացված փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

7.2 Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի (հասցեի) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հայտ ներկայացնել Լիցենզիայի վերաձևակերպման համար:

7.3 Սույն Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է սույն Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգով» սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

7.4 Լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում Հանձնաժողովին ծանուցագրով տեղեկացնում է իր հիմնադիր փաստաթղթերում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

7.5 Լիցենզիայի կորստի (կորելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքերում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով: Լիցենզիայի կրկնօրինակի ստացման կամ ժամկետի երկարաձգման ընթացակարգերը կարգավորվում են Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտով:

8. Այլ պայմաններ

8.1 Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան 2006 թվականի մարտի 15-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել բնական գազի փոխադրման ցանցի՝ տեխնիկական փորձաքննություն անցած նախագիծը և Ներդրումների իրականացման ժամանակացույցը:

9. Ծանուցում

9.1 Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

Հավելված 1
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2006 թվականի հունվարի 20-ի № 7Ա որոշմամբ հաստատված
Հավելվածի

Բնական գազի փոխադրման ցանցի սխեման և գազապարի ծրագիծը